



"ՓՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԲ ՏՆՈՅԵ ԱՐ ԲՆՈՒ ԳԱՆ." ՂՈՒԿ. ԺԲ. 16.

ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1892

ԹԻՒ 10



ԱՐԲԵՆԱՐԻՆ ԼՈՒՄԱՆ

ԱՐԲԵՆԱՐԻՆ ԼՈՒՄԱՆ

Տէրը իրերը շէշեր մարդկային կշիռով և իրաց արժէքը չհաշուեր մարդկային թուաբանութիւնով: Այն աղքատ որբեւորին ընծան Հրեայ հարուստ իշխաններուն աչքին առջև այնպէս չնչին էր որ նոյն բանն էր գանձանակին մէջ զայն նետելը և չնետելը: Եթէ ֆրիկչն մեր փոխանակ իր խօսքն աշակերտաց ուղղելու ուղղել իշխաններէն մէկուն, և ըսէր, «Այս որբեւորին ձենէ աւելի բան նետեց գանձանակը», անոր զգացումները պիտի վերապրուէին: Եւ սակայն Տեառն մերայ խօսքը ուղիղ էր: Ընծայի մը, նա էրի մը արժանիքը կը չափուի ընծայողին կարողութենէն: Իշխաններուն գանձանակը նետած աւելի մեծ դամարները չէին մեծանձնուրացութեան արդիւնք: Անոնք տակաւին ունէին իրենց բոլոր պէտքերը, կերակուր և ուրիշ ամէն բան որ հարկաւոր են հանգիստ և երջանիկ ապրելու համար: Բայց որբեւորին իւր երկու լուման տարով կրնար անօթի մնալ. իրեն

չմտաց բան մը որով հաց գնէր . տուաւ բարձր իւր ունեցածը, վասն զի կը սիրէր Եհովան և անոր տաճարին պաշտամունքը : Աղքատ որբեարիները և աղսյք որ քիչ բան ունին Տէրոջը տալու, կրնան ուրախ ըլլալ որ այն զիւրքերը որ պիտի բացուին դատաստանին օրը, եկեղեցւոյ գանձապետին տոմարները չեն, այլ արձանագրող հրեշտակին զիւրքերը որոց մէջ տրուած

չէր որ կաթը թողոր սեղանին վրայ մինչ երեք խաղուն կատուի ձագեր կը գանուէին սենեկին մէջ : Եւ եթէ շատ հեռի գտնուէր, ետ դարձած ժամանակը կարծեմ պիտի տեսնէր որ ուրիշ չարիքներ ալ գործուեր են :

ԷՏԻ ԹՈՒՅԻՅԻԿ

Երբեմն մարդիկ կ'աղօթեն առանց նպատակի, և շատ անգամ առանց ար-



ՁԱՐԻՔ ԳՈՐԾՈՂ ԿԱՏՈՒԻ ՁԱԳԵՐ

ընծային քանակութեանը հետ արձանագրուած պիտի գտնուի նաև ընծայողին կարծելութիւնը, և ընծային տրուելուն շարժառիթը :

ՁԱՐԻՔ ԳՈՐԾՈՂ ԿԱՏՈՒԻ ՁԱԳԵՐ

Պէ՛տք է պատժել այս փոքրիկ կատուի ձագերը որ սեղանին վրայ ելլելով կործնելիս իրենց տիրուհոյն կաթի գաւաթը : Կարծեմ ոչ, վասն զի անոնք չեն գիտեր ի՛նչ կ'ընեն : Մարդու սիրտը կը նեղանայ երբ կաթը կը թափի, երբ սեղանին փոսքը կ'աղտոտի . բայց եթէ յանցանք մը կայ ասան տիրուհոյնն է այն, նա պէտք

դիւնք մը ձեռք բերելու : «Իմ կանչելուս ձայնը մտիկ ըրէ, ով իմ թագաւորս և Աստուծոս, վասն զի ես քեզի կ'աղաչեմ : Ո՛վ Տէր, առտուանց պիտի լսես իմ ձայնս, առտուանց պատրաստ պիտի ըլլամ քեզի ու սպասեմ,» կ'ըսէ Սաղմոսերգուն : Նա սովոր էր աղօթել նպատակ մը ունենալով իւր առջև, և իւր աղօթքը կ'ուղղէր դէպի յաւիտեանական Աթոռը : Ինչպէս մարդ մը կը նետէ նետը՝ նայելով որ ճիշդ նպատակին զարնէ, այնպէս ալ նա կ'ուղղէր իւր աղօթքն Աստուծոյ, և կը սպասէր օրհնութիւն : Անգամ մը Ամերիկեան մեծ պատերազմին ժամանակը մայր մը կը նստէր

լուիկ և առանձին, ինչպէս շատ մայրեր սովոր էին նստիլ ակրութեամբ այն արիւնհեղութեան սև օրերուն մէջ, և ահա նորա փոքրիկ մանչը եկաւ և ըսաւ, «Մայրիկ, ինչո՞ւ այսպէս տխուր ես :» «Էտի,» ըսաւ մայրը, «պատերազմ մը եղաւ, և կը վախճամ թէ հայրդ սպաննուած կամ վիրաւորուած է :»

Փոքրիկ տղան լսեց մօրը այս խօսքերը, և դնաց մէկդի : Մայրը յետոյ սեսաւ որ տղան կը խաղար դուրսը սրահին մէջ, կը շակէր իւր թռուցիկը և կը թուէր թէ բան մը կը գրէր անոր վրայ, և դունէն դուրս ելլելով գնաց՝ թռուցիկը ձեռք բռնած : Քիչ մը ետքը ետ դարձաւ ուրախ և պայծառ դէմքով և ըսաւ, «Մայրիկ, ես գրեցի թռուցիկին վրայ, «Կ'աղաչեմ, Աստուծոս, հոգ տար հայրիկիս, և նորէն ապահով տուն դարձուր զնա .՝ յետոյ թռուցիկը վեր զրկեցի, այնչափ բարձր որչափ կրցայ, և կարեցի լալը, և կարծեմ հիմա տեղը գացած է :»

Անհաւատ մը անտարակոյս կը խընդոյ Էտիի հաւատքին և իւր թռուցիկի պատմութեան վրայ, սակայն ասոր նման վատահոլութեամբ զրկուած աղօթք մը շատ աւելի մեծ հաւանականութեամբ կը հասնի նպատակին՝ քան բազում պերճախօս խնդրուածներ՝ որ կ'ըլլան ձևերով, փառքով և շքեղութեամբ, բայց որք երբեք չեն հասնիր բարձր, աստուածային Մեծ վայելչութեան աթոռը : Աւելի կը վրտահիմ Էտիի թռուցիկին վրայ զըրուած աղօթքին՝ իմ պէտքերուս համար, քան ամբարտաւան Փարիսեցւոյ շրթանց խօսքերուն, որ «Ո՛վ Աստուծոս, շնորհակալ եմ քեզմէ,» ըսելով կ'աղօթէ և կը պատմէ Տէրոջը թէ ո՛րքան բարի է ինք, և որոյ պաշտամունքը կը բաղկանայ վար նայելէ ուրիշ մարդոց վրայ փոխանակ վեր, Ամենաբարձրերոյն վրայ, նայելու :

ՓՈՒՔՐԻՔ ԿՈՅՐ ԱՂՋԻԿԸ ԵՒ ԿԱՊԻԿԸ

Փրօֆէսոր Ռ. Լ. Կարնըր որ շատ ուշադրութիւն տուած է կապիկներուն և կը ջանայ հաստատել թէ անոնք իրենց յատուկ լեզու ունին, կուտայ հետազայ ծանօթութիւնները կապիկ մը վրայ որ իւր տան մէջ ընտանեցած էր .

Մինչ կը գրեմ այս յօդուածը, քովս կը գտնուի կապիկ մը որ կը կոչուի Նէլլի : Նա է հեզ, զգայուն և շատ մտացի իւր ցեղին մէջ որոյ նման քիչ տեսած եմ : Սենեակս կը յաճախէ

իրը վեց տարեկան սրամիտ տղայ մը զոր Նէլլի կը սիրէ տարօրինակ սիրով: Երբ Նէլլի կը տեսնէ տղան, կատարեալ ցնծութեան մէջ կ'ընկերէ մի, և երբ տղան կը հեռանայ իրմէ, կը կոչէ զնա այնպիսի փափաքով և զգացմամբ որ մարդուս գուծը կը շարժի: Երբ տղան կը մտնենայ, լսելի աստիճանաւ կը խնդայ և կը ցուցնէ ուրախութեան ամէն նշան: Երբեք չձանձրանար տղային ընկերութենէն և երբեք իւր ուշադրութիւնը չդարձուներ ուրիշներու երբ նա իւր քով ըլլայ:

Ձայն գնեղա շուտ ետքը, Ուաշինկթըն եկաւ փոքրիկ աղջիկ մը որ էր խուլ, համր և կոյր: Այս աղջկան մեծագոյն փափաքներէն մին էր տես-


հետ որ իբր թէ զիտէր անոր ցաւագար ըլլալը: մինչ երբեք չէր թող տար ուրիշներու որ դպչէին իրեն թէ պէտ շատ փափկութեամբ: Աղջիկը կը թուէր թէ չէր գիտեր որ կապիկները կրնան խածնել:

Յորչափ լոյս կը վառէր, հնար չէր որ Նէլլի պառկէր քնանար, և թէ պէտ հիմա կէս գիշերն երկու ժամ անցած է, բոլորովին արթուն է և կը գրօսնու իւր խաղալիկներուն հետ: Իւր հանդիտող չվրդովելու համար թանձր վարագոյրներով պատեցի վանդակը կրկին և կրկին անգամ: Մտրեցի լոյսը, և հանդարտութիւն պահեցի որպէս զի նա քնանար: Քիչ յետոյ կամացուկ մը վառեցի լոյսը և նորէն սկսայ գրել: Մէկ վայրկեանէն

ՔԻԼՔԻ, ԳԻՒՂԱՔԱՂԱՔ ՅԻՌԱՆՏԱ
Ուրախ կ'ըլլայինք եթէ ունենայինք աղուոր պատկերներն փրկանաւերու երկու կայարաններուն որ կը գտնուին Սև Ծովուն վրայ Վոսփորի բերանը, որպէս զի տպէինք այս թերթին մէջ: Շատ կանայք այրի և գուցէ հարիւրաւոր տղայք որք պիտի մտային եթէ փրկանաւք և ազատարարաց խումբերը չկենային:

Այսպիսի կայարանք շատ կը գտնուին բոլոր քաղաքակիրթ աշխարհին վրայ աստ և անդ. և ուր որ կայ վտանգաւոր ծովեզր մը, այս վարժուած անձինք պատրաստ կը գտնուին օգնել նաւակով, հրթիռներով (հաւէ ֆլէյն) և ազատարար կառքով որ ետ և առաջ կ'երթայ խորաակեալ նաւուն կցուած և պրկուած չուանի մը վրայէն, և միշտ, երբ փոթորիկ կենայ, ազտարար խումբէն քանի մը անձինք կը հսկեն և ծովը կը զննեն ծովեզրէն դիտակներով, պատրաստ իրենց ընկերները կանչելու երբ օգնութեան պէտք կ'ենայ:

Պատկերը կը ցուցնէ Քիլքի գիւղաքաղաքն, իոլանտայի արևմտեան ծովեզրերը, զուարճալի տեղ, ուր ամառը կ'այցելեն ծովուն ջրին մէջ լուսացուիլ ուզողները, վասն զի այդ ծովածոցը լաւ պաշտպանուած է Ովկիանոսին փոթորկաց և այլեաց դէմ, և ծովեզրն ունի քիչ քիչ հակող աւազուտ յասակ, զերծ ժայռերէ և տիղմէ: Դովածոցին ճիշդ բերնին վրայ կը գտնուի ցցուած ժայռ մը որում կը զարնուին նաւերը շատ անգամ, և Քիլքիի դիմացը ծովածոցին եզրերը կայ հակողներու կայարան մը որ ունի փրկանաւեր և նաւաբեկեալներ ազատելու բոլոր միջոցները զորս հնարած է դիտութիւնը: Պատկերին մէջ երեցող երկու նաւաստիներէն մին դիտակով կը նայի թէ արդեօք օգնութեան կարօտ նաւ կ'այ:



ՔԻԼՔԻ, ԳԻՒՂԱՔԱՂԱՔ ՅԻՌԱՆՏԱ

լսեցի որ ծածկուող ձայն կը հանէր և տեսայ որ անոր փոքրիկ թուխ աչուրները կը նայէին, մինչ իւր փոքրիկ սև ձեռուրներով իրարմէ կը զատեր վարագոյրները և կը բանար միջոցները: Երբ տեսաւ թէ ինչ էր ասոնց բոլորին պատճառը, կարկաշներ ուղղեց ինձ իւր մեղմ և ճոխ ձայներովը մինչև որ վերցուցի վարագոյրները որպէս զի կարող լինէր իւր չորս կողմը նայիլ սենեկին մէջ: Մեծ զբօսանք եղաւ ինձ տեսնել անոր վարագոյրը վերցունելը և խօսիլն ինձ հետ այդ կերպով: Միայն անոնք որ փորձն առած են այս համակրանաց, կարող են գիտնալ թէ ինչպէս եռանդուն էին անոնք և անկեղծ: Երբ միանգամ վայելէք կապիկներուն վստահութիւնը, պիտի հասկնաք թէ բան մը կարող չէ խախտել զայն եթէ ոչ դուք, կամ գէթ այնպիսի բան մը՝ զոր կը համարին թէ դուք ըրած էք: Անոնց փոքրիկ ականջները չեն խաբուիր շաղակրատութիւններէ և իրենց լեզուներն ազատ են անոնցմէ:

նեւ ողջ կապիկ մը, այսինքն՝ տեսնել իւր մասներով: Աղջկան կ'ընկերանար իւր ուսուցիչը որ կը կատարէր նաև թարգմանի պաշտօն: Կապիկը վաճառողը լուր դրկեց ինձ երթալ և աղջկան ցուցնել կապիկը: Վանդակէն դուրս հանեցի կապիկը, երբ ինձ զատ ուրիշ մը ձեռք դպցունէր իրեն, կը մրմուռ և բարկութեան նշաններ կը ցուցնէր, բայց երբ շփեցի աղջկան մտղերը և այստեղը նախ իմ ձեռուրներովս և յետոյ կապիկին թաթերով, սա նայեցաւ վրաս հետաքրքրութեամբ և հանեց մեղմ ձայն քանի մը անգամ և յետոյ սկսաւ քաշել աղջկան ականջներէն և մազերէն: Վայրկեան չանցաւ և ահա անոնք եղան նման հին բարեկամներու և խաղակիցներու: Եւ իբր մէկ ժամ այնքան հաճոյքով խաղացին իրարու հետ, որ զփականկութեամբ բաժնուեցան իրարմէ: Կապիկն այնպէս փափկութեամբ կը վարուէր աղջկան

ԿԱՄՈՒՐՁՆ ԶՐՈՅ ՈՂՈՂՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
«Գետին ջուրը կը լցունէ հովիտը, հայր», ըսաւ Յովհաննէս: «Անշուշտ անոր ցած մասը կը լցուի», պատասխանեց հայրը, մինչ հայր և որդի կառքին մէջէն կը նայէին ընդարձակ աւերածի տեսարանին վրայ: Գետը յորդած էր և ջրով ծածկած էր երկու կողմի լայն հողերը, և ժամանակ ժամանակ երեցող տախտակներու և գերաններու կտորները նշան էին թէ



կամուրջ մը կամ ամբարանոց մը փլած տարուած էր ջրէն :

«Չեմ գիտեր, Յովհաննէս,» ըսաւ հայրը, «կը վախնամ թէ մեր կամուրջը փլած է :» «Ո՞ր կամուրջը :» «Երկայն կամուրջը, փայտեղէնը, որ կը յիշեմ թէ, կեանքիս մէջ քանի մը անգամ փլած և տարուած է ջրէն :» «Ինչո՞ւ համար փայտէ կը շինեն զայն :» «Փայտէ կամուրջին քիչ ծախք կ'երթայ : Հիմա պէտք է երթամ և տեսնեմ թէ դեռ կը մնա՞յ այն :»

Գիւրին բան չէր երթալ ճամբէն, վասն զի ջուրը քակած աւրած էր ճամբան տեղ տեղ :

«Երկայն կամուրջը կը կենայ տակալին» ըսաւ հայրը, և յետոյ, կըստ ըրելով իւր խօսքը, յաւելցուց, «Կարծեմ կը փլի :»

Գետեղերը մեծ ամբոխ հաւաքուած կը դիտէին արկածին տեսարանը, և հայրը և Յովհաննէս միացան հանդիսատեսներուն հետ : Կամուրջն սկսած էր քայքայուիլ : Եւ մինչ կը խօսէր հայրը կը լսուէր անոր ջախջախուող գերաններուն և տախտակներուն ճարձատիւնը. յետոյ ամբողջ կամուրջն ինկաւ ջրին հոսանքին մէջ և տարուեցաւ վար :

«Հնար չէ երկայն կամուրջէն անցնել ջրին միւս կողմը, Յովհաննէս : Պարտիքդ դիմել ֆարէ կամուրջին : Երանի՛ թէ աւերի կանուխ երթալ յինք :» «Ես չեմ երթար :» «Ինչո՞ւ համար :» «Վասն զի տեսայ կամուրջի մը քշուիլը. աչքովս տեսայ :» «Եկուր փորձենք անցնել ֆարէ կամուրջէն :»

Հասան անոր. և Յովհաննէս, «Ահա՛, հայր, ահա՛, կամուրջը կը կենայ» գոչեց ուրախութեամբ : «Մտիջապէս անցնինք անոր վրայէն, Յովհաննէս : Հիմա որ կ'երթանք, կ'ուզեմ որ դու տես թէ ո՞րչափ լայն է այդ կամուրջը :»

Մինչ կ'անցնէին կամուրջէն, Յովհաննէս աղաղակեց, «Հայր, կամուրջն այնպէս լայն է որ չտեսնուիր անոր դէմ զարնուող ջուրը :» «Գիտեմ,» ըսաւ հայրը, «ժողովուրդը աւարկեց կամուրջին համար երբ կը շինուէր, Ըսելով թէ լայն է և մեծ ծախքով պիտի ելլէ. բայց հիմա ուրախ ենք որ այդպէս շինուեցաւ : Բոլոր ալերները և փրփուրները որ յառաջ կու գան ջրին կամուրջին զարնուելէն, չեն երևիր : Ընտիր կամուրջ է :» «Այո, նաև հաստատուն :»

Յովհաննէս մտաղի տղայ էր : Զրոյ ողորմութիւն և այն երկու կամուրջը զօրաւոր ապաւորութիւն թողուցին անոր մտքին վրայ նաև մինչև շատ

ժամանակ յետոյ : Արգար, Յովհաննէս սի աշակերտակիցներէն մին, մեռած էր : «Հայր,» ըսաւ Յովհաննէս, «Արգար երբեք չէր վախնար մեռնելէ : Կ'ըսէր թէ կը սիրէր փրկիչը, և դու տեսիր և կու գայ երկինք տանիլ զնա : Արգար քնացաւ : Երբեք չէր նմաներ մեռնողի :»

«Յովհաննէս,» ըսաւ հայրը, «Ի՞նչ է մահը. եթէ անոր վրայ շիտակ նախինք, ուրիշ բան չէ, բայց միայն քնանալ, և յետոյ արթննալ և աչքը բանալ տան մէջ ուր երկնաւոր Հայրը երջանիկ կ'ընէ բոլոր իւր զաւակները : Արգարու մահը կը յիշեցունէ ինձ ֆարէ կամուրջը որմէ անցանք սողման ժամանակը : Այդ կամուրջն այնպէս լայն էր, ինչպէս դիտես, որ մենք չէինք տեսներ անոր շուրջն է. զոչ աղմուկը և շփոթութիւնը, և այն լայն կամուրջին մէջտեղը շատ խաղաղ էր և ապահով : Արգար չէր տեսներ մահուան գետը : Յիսուս եղաւ անոր լայն, զօրաւոր կամուրջ որոյ վրայէն քալեց Արգար : Բայց, Յովհաննէս, փրկիչը կ'ապրի ոչ միայն վստահացունելու համար զմեզ Աստուծոյ սիրոյն վրայ որ կամուրջ է մահուան վրայ ձգուած, այլ անցունելու համար զմեզ նեղութեանց և փորձութեանց շատ մը ուրիշ հոսանքներէ որոց վրայէն հարկ է մեզ անցնիլ : Կը տեսնես որ Աստուծոյ սողորմութեան այս լայն կամուրջը կը սկսի հաս, այժմ ճիշդ մեր ստից ներքէն է այն և կը շարունակէ մեր առջև դանուած տարիներուն մէջ : Կ'անցնի ամէն վասն զի և ամէն հոսանքի վրայէ : Շատ մօտ է, բայց է և պատրաստ կը կենայ բոլոր այնպիսեաց առջև որք կու գան զղմամբ և ապաշխարութեամբ : Եթէ այսպէս մօտ է, միթէ պէտք չէ մեզ քալել անոր վրայէն, և սկսիլ այսօր ճանապարհորդել թաղաւորի Պողոսայէն : Խորհա՞՞մ ես երբեք անոր վրայ :»

Բուն այդ օրը Յովհաննէս ծունր կը կրկնէր փրկչին ոտքը, և ցաւելով իւր մեղաց համար, կը փափաքէր կատարել Աստուծոյ կամքը, և սկսաւ քալել Գրիստոսի, իւր ամենօրհնեալ փրկչին և իւր երէց եղբոր, հետ :

ՓՈՔՐԻԿ ԱՂԶԿԱՆ ՄԸ ԳՈՐԾԸ

Բանի մը տարի առաջ փոքրիկ աղջիկ մը դիմեց Ամերիկայի մեծ քաղաքներէն միոյն մէջ գտնուող հովուի մը և խնդրեց ընդունուիլ անոր կի-

րակնօրեայ դպրոցին մէջ : Պատասխան արուեցաւ թէ կարգերը այնքան լեցուն էին որ տեղ չկար էրեն համար, և թէ եկեղեցին այնքան փոքր էր որ հնար չէր ուր դաս մը կազմել : Փոքրիկ աղջիկը տեսաւ որ իւր յոյսը պարապ էրաւ, և սկսաւ քիչ քիչ ստակ խնայել — աղքատ ընտանեաց զաւակ էր — եկեղեցոյ շէնքն ընդարձակելու համար, որպէս զի ինք և ուրիշ փոքրիկներ կարող լինէին ընդունուիլ կիրակնօրեայ դպրոց : Բայց մարդու չյայտնեց իւր այս փառասիրական նպատակը, այնպէս որ երբ քանի մը ամիս յետոյ այս եկեղեցոյն հովուր կանչուեցաւ աղջկան անկողնոյն քով միտիմարելու համար զնա իւր սաստիկ հիւանդութեան մէջ, չտեսաւ անսովոր բան մը, այլ միայն տկարացած մանուկ մը վեցուկէս տարեկան : Փոքրիկ հիւանդը մեռաւ. և շաբաթ մը յետոյ անոր հինգամ կարմիր յուշատետրին մէջ, որ իւր խնայութեան դրամատունն էր, գրուեցաւ յետևե. եթէ միայն սկսեցի կրթութիւն ստանալ, և թղթի մը կտոր որոյ վրայ գրուած էր մանկական դիրերով իւր փառասիրական պատմութիւնը և իւր անձնուրացութեան նպատակը :

Տարածուեցաւ հեռաւոր տեղեր այն կարմիր յուշատետրին, անոր պարունակութեան և անոր տիրոջ անդրդուելի հաւատքին պատմութիւնը : Շարժեց թէ սուրբին և թէ մեղաւորին սիրտը փոքրիկ աղջկան փառասիրական մարդայնութիւնն է այդ մարդիկ և կանայք աշխատեցան և մանկունք ստակի խնայութիւններ ըրին զայն կատարելու համար : Այս յետևե. եթէ միայն սկսեցի կրթութիւն ստանալ, և թղթի մը կտոր որոյ վրայ գրուած էր հասու 250,000 տղարի — դրեթէ 55,000 Օամ. ոսկոյ — և այսօր այդ փոքրիկ դիւցազնուհոյն պատկերը բնական մեծութեամբ կը կախուի գոյէճի մը շէնքին մէջ ուր կ'ուսանին 1,400 աշակերտք. գոյէճին կից կը գտնուի եկեղեցի մը որ կրնայ պարունակել 8,000 անձեր, հիւանդանոց մը մանկանց համար, բարի Սամարացոյն անուան նուիրուած, և կիրակնօրեայ դպրոցի սրահ մը, բաւական մեծ որ կրնայ պարունակել բոլոր աղջիկները և մանչերը ուր կ'ուզեն ընդունուիլ հոն : Կեղծ պատմութիւն է այս : Այնպէս պիտի կարծուի գուցէ, բայց ոչ, ճշմարիտ պատմութիւն է բարեգաղթապէս : Փոքրիկ աղջկան անունն էր Հաթիթ Մէյ Աւայէթ, և վերջիվերջ շքեղ հաստատութիւնը կը գտնուի Ամերիկայի Ֆլորատէյֆլա քաղաքին մէջ :

Ամերիկայի Միտիմարաց Կրթութեան Կոմիտէի Արտօճատ Գործընկերութիւնը Տնօրէն—Խմբագիր Զինճանճար Երգու Սահմանափակ ընտանիքի համար ԿՈՍՏԱՆԴՆՍԻՆ ԲՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՈՐ ՊՅՅԱՅՆԱՆ